



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Մ Ա Ր Դ Ո Ւ Ի Ր Ա Վ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր Ի Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ի
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ**

002, Երևան, Պուշկինի փող. 56ա, հեռ. 53 85 77, ֆաքս 53 88 42
ombuds@ombuds.am, www.ombuds.am

09.11.2010

«Հավաքների մասին» օրենքի նախագիծը ներկայացվեց քննարկման

Այսօր՝ նոյեմբերի 9-ին, տեղի ունեցավ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից ներկայացված «Հավաքների մասին» օրենքի նախագծի քննարկումը:

Բացման խոսքով հանդես եկան GTZ համակարգող Վ. Պողոսյանը, ՀՀ նախագահի օգնական Գ. Կոստանյանը և ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Հ-Յ Շմիդթը: Նախագիծն ընդհանուր դրույթներով ներկայացրեց ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Ա. Հարությունյանը:

Քննարկմանը մասնակցեցին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի փորձագետները: Ներկա էին նաև մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՀՀ ԱԺ պատգամավորներ և այլք:

Հանդիպմանը հրավիրված Մոլդովայի և Ուկրաինայի օմբուդսմենների ներկայացուցիչները անդրադարձան իրենց երկրների համապատասխան օրենքներին:

Ծավալվեց հետաքրքիր քննարկում, ինչն իրապես կօգնի նախագծի հետագա բարելավմանը:

«Հավաքների մասին» օրենքի նախագծին կարող եք ծանոթանալ Պաշտպանի պաշտոնական կայքի՝ www.ombuds.am «Զեկույցներ» բաժնից:

Կարծիքները և առաջարկությունները կարող եք ներկայացնել ombuds@ombuds.am

Էլեկտրոնային հասցեով: Շնորհակալություն համագործակցության համար

*ի»Օ»İ³ıáóÃÛ³Ý ··Ñ³è³ñ³İ³ÛÝáóÃÛ³Ý
Ñ»ı İ³á»ñÇ μ³ĂÇÝ
Ñ»é. : /+374 10/ 53 85 77*